ԻՆՉՈՒ՞ ՈՉ ԶՎԱՐԹՆՈՑԸ

1963 թվականի աշնանից, երբ «Զվարթնոց» գիրքն արդեն չկար վաճառքում, նրա ընթերցողներից շատերը հարցնում էին, թե արդյո՞ք հնարավոր է երբևէ վերականգնել հայ ճարտարապետության այդ չնաշխարհիկ գլուխգործոցը, որքա՞ն գումար կպահանջվի դրա համար, հետագայում այն ի՞նչ նպատակի կծառայեցվի:

Ոմանք հավատացած լինելով, որ Զվարթնոցն անպայման կվերականգնվի, արդեն արծարծում էին կոնկրետ հարցեր, ինչպես օրինակ՝ Զվարթնոցը կվերականգնվի պահպանված ավերակի տեղում՝ նրա վրա, թե՞ կողքին:

Այդ օրերից որոշ ժամանակ անց ի հուրախություն բոլորիս հայտնի դարձավ, որ հանրապետության կառավարությունը որոշել է վերականգնել համընդհանուր ճանաչման արժանացած ճարտարապետական երկու հուշարձաններ՝ Գառնիի հեթանոսական տաճարը, կառուցված մեր թվարկության առաջին դարում և հռչակավոր Զվարթնոցը, կառուցված 640-ական թվականներին՝ մեզանից մոտ 1330 տարի առաջ:

Բնական է, որ այդ որոշումը մեծ ոգևորություն առաջացրեց ճարտարապետների շրջանում, նրանք միմյանց շնորհավորում էին, ծրագրում, մշակում աշխատանքների հետ կապված հարցեր:

Գառնին մանրամասն չափագրվել և վերակազմության նախագիծը մշակվել էր դեռևս երեսնական թվականներին պրոֆ. Գ. Ն. Բունիաթյանի կողմից: Հետագա պեղումների հիման վրա որոշ մանրամասներ և դրվագներ ճշտել և լրացրել էր ճարտարապետության թեկնածու Ա. Ա. Սահինյանը: Ամեն ինչ պատրաստ էր վերականգման աշխատանքներին անցնելու համար և, ահա երրորդ տարին է, որ վերակառուցողներն աշխատում են Գառնիում: Շատ չի անցնի և մենք ականատես կլինենք ճարտարապետական գոհարներից մեկի զմայլելի տեսքին հայրենի չքնաղ բնության գրկում:

Զվարթնոցի բախտը ինչ-որ չբերեց, թե ինչ տեղի ունեցավ, չգիտենք, միայն հայտնի դարձավ, որ նրա փոխարեն վերականգնվում է Տաթևի վանքը:

Ինչ խոսք, որ Տաթևի վանքը նույնպես մեր լավագույն հուշարձաններից է, այն ավերվել է երկրաշարժից՝ մեր օրերում, բոլոր քարերը տեղում կան, կա նաև նրա չափագրությունը կատարված ճարտարապետ Գ. Աղաբաբյանի կողմից 1943-44 թվականների ընթացքում: Հետևում է, որ այն վերականգնելու համար դժվարություններ չկան:

Մեզ, այնուամենայնիվ, անհասկանալի մնաց, թե ինչու Տաթևը վերականգնվում է Զվարթնոցի փոխարեն, չէ՞ որ այդպիսիք միմյանց չեն փոխարինում, թեպետ և երկուսն էլ վերականգնման արժանի են, ամեն մեկն իր արժեքն ունի և իր նշանակությունը, թերևս հերթականություն է նշանակված, գուցե:

Ցավոք, իրերի դրությունը մի քիչ այլ է: Պարզվում է, որ որոշ ճարտարապետներ ընդհանրապես դեմ են արտահայտվել ոչ միայն Զվարթնոցի, նաև Գառնիի և մի քանի այլ հուշարձանների վերականգնմանը, որ. «Ավերակ վիճակում այդ հուշարձանները զգալի գեղեցկություն են ներկայացնում. բնության մեջ և մեր պատկերացումներում այդպիսիք կան որպես ավերակներ, մենք կասկածում ենք, որ վերականգնված վիճակում այդ հուշարձանները թերևս գեղեցկության նույն հմայքը չպահպանեն»:

Թող թույլ տրվի ասել, որ մեր այդ էսթետները, ըստ երևույթին կասկածում են ճարտարապետության գեղեցկությանն ընդհանրապես, այլ կերպ ինչպես բացատրել, որ ճարտարապետական գլուխգործոցներն իրենց կանգուն վիճակում պակաս ներշնչող կլինեն, քան երբ ավերակ են՝ գետնատարած:

Ինքնին հասկանալի է, որ նման տրամաբանությամբ մեր հուշարձանները ավերակներից վեր չեն բարձրանա:

Ով, ով, բայց ճարտարապետը նայելով նախագծին, աչքերի առջև պետք է պարզ տեսնի ապագա այն կառուցվածքը, որն այժմ դեռ նախագիծ է:

Հանրահայտ է, որ ճարտարապետական երկը իր ամբողջ ձայնով հնչում է կառուցումն ավարտված՝ կանգուն վիճակում, ավերակը աններդաշնակ բեկորների կույտ է, բեկբեկուն ժխոր:

Փոքրաթիվ ճարտարապետների այդ նույն շրջանակներում թերահավատ են նաև հուշարձանների վերակազմության նախագծերի լիակատարության նկատմամբ:

Անդրադառնալով Զվարթնոցի վերակազմության նախագծին, քննենք նրա այժմյան իրավիճակը:

Զվարթնոցի վերակազմության նախագիծ է կազմել ճարտարապետ-գիտնական Թորոս Թորամանյանը: Այդ նախագիծը ճարտարապետական հորինվածքի, առավել ևս, կոնստրուկտիվ առումով սկզբներում հավատ չի ներշնչել ոմանց: Սակայն Զվարթնոցի երկվորյակ՝ Գագկաշենի մանրապատկերի (модель) հայտնաբերումից (1906 թ.) հետո թերահավատները լռում են, տեղի տալիս Թորամանյանի վերակազմության առջև, որը գիտականորեն հիմնավորված էր ավերակում պահպանված առանձին դրվագների և բազմաթիվ բեկորների տվյալներով:

Այդ օրերից մոտ կես դար անց, երբ արդեն Թորամանյանը չկար, նրա վերակազմության նախագծի որոշ մասերի նկատմամբ անհամաձայնություն է հայտնում ճարտարապետության դոկտոր-պրոֆ. Ա. Վ. Կուզնեցովը: Թորամանյանի վերակազմության վերլուծումից հետո, նա՝ Կուզնեցովը, ներկայացնում է իր պատկերացումները բովանդակող վերակազմության գծանկար: Այդ գծանկարը որոշակիորեն չի բխում ավերակում առկա տվյալներից և, հետևաբար զվարթնոցագիտության շրջանակներում ընդունելություն չի գտնում: Նրա հեղինակը ավերակի երկժամյա ուսումնասիրության ընթացքում ի վիճակի չի եղել այնտեղից վերցնել նոր վերակազմություն ստեղծելու համար անհրաժեշտ ստույգ տվյալներ:

Հիմնվելով Ա. Վ. Կուզնեցովի տեսական-քննական վերլուծության ու եզրահանգումների վրա, 1959 թվականին ճարտարապետության թեկնածու Ս. Խ. Մնացականյանը հիմնովին մերժում է Թորամանյանի վերակազմությունը, առաջարկելով իր «Զվարթնոցի վերակազմության նոր նախագիծը»:

Պետք է նկատել, որ Ա. Վ. Կուզնեցովն ու Ս. Խ. Մնացականյանը Զվարթնոցի հորինվածքը, հատկապես նրա երկրորդ աստիճանի սահմաններում, պատկերում են այնպես, ինչպես դեռևս 1936 թվականին «Վրաց ճարտարապետության ուղիները» աշխատության մեջ Գ. Ն. Չուբինաշվիլին պատկերում է զվարթնոցատիպ Բանակ (Բանա) տաճարը: Չուբինաշվիլին, Կուզնեցովն ու Մնացականյանը հիմքում բոլորակ այդ տա-

ճարների երկրորդ աստիճանը (ярус) պատկերում են ոչ թե բոլորակ, ինչպես եղել է, այլ տետրակոնխային կազմությամբ:

1963 թվականին լույս տեսած «Զվարթնոց» աշխատությամբ տողերիս գրողը վերաքննելով Զվարթնոցի համար եղած վերակազմության նախագծերը, արտահայտված կարծիքներն ու առաջարկությունները, հիմնվելով ավերակի նոր և ավելի հանգամանալից չափագրությամբ ստացած տվյալների վրա հանգեց եզրակացության, որ Թորոս Թորամանյանի Զվարթնոցի վերակազմության նախագիծը համապատասխանում է հուշարձանի պահպանված դրվագների և բեկորների տվյալներին. իրականում չկան այնպիսի փաստեր, որոնք թույլ չտային համոզվելու, որ Զվարթնոցը եղել է այնպիսին, ինչպիսին վերստեղծել է իր նախագծով ճարտարապետ-գիտնական Թորոս Թորամանյանը:

Վերոհիշյալից բացի, աշխատության մեջ բերված են գծագրեր, որոնք լրացնում են Թորամանյանի վերակազմության մեջ եղած պակասը:

«Զվարթնոց» աշխատության քննարկումը Հայաստանի Ճարտարապետների միությունում և բուն ավերակում ողջ լիակատարությամբ հավաստեց Թորամանյանի վերակազմության բարձր արժանիքները և այն մերժողների փաստարկների անհիմն լինելը:

Հետագայում Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի գիտական խորհուրդը այլ առիթով անդրադառնալով Զվարթնոցի հարցին, հավանություն տվեց Թորամանյանի ստեղծած վերակազմության նախագծին, ամբողջովին մերժելով այլ վերակազմությունների հեղինակների առաջարկությունները:

Նույն հարցը, նույն առիթով վերաքննվեց Մոսկվայում և ВАК-ը հաստատեց վերոհիշյալ գիտական խորհրդի եզրակացությունը:

Այսպիսով հայտնի է դառնում, որ Զվարթնոցը ևս ունի լիակատար վերակազմություն, ուրեմն վերանում է նաև այդ դժվարությունը հուշարձանը վերականգնելու ճանապարհին:

Մեզ թվում է կա նաև մեկ այլ դժվարություն, որը, ըստ երևույթին, հնարավոր պիտի լինի հաղթահարել: «Զվարթնոց» աշխատության մեջ առաջարկվում էր անաղարտ պահպանել եղած ավերակը և նրանից ոչ հեռու կառուցել նորը: Այս դեպքում չէր ստացվի, որ մենք վերականգնում ենք կործանված հուշարձանը: Կստացվեր, որ մենք կառուցում ենք ամբողջովին նորը, որի օրգանիզմում բացակայում են այն բոլոր բեկորները, հնության այն վկաները, որոնք պահպանվում են ավերակում մինչև այսօր:

Այդպիսի «վերականգնում», ինչ խոսք, խրախուսելի չէ և ընդհանրապես ընդունված ձև չէ:

Իրերի վիճակը թելադրում է «գտնել ինժեներական լուծում և հուշարձանը վերականգնել գոյություն ունեցող ավերակի վրա, առանց խաթարելու այն ամենը, ինչ պահպանվում է տաճարի կործանումից հետո՝ անցած 1000 տարիների ընթացքում»:

Այս միտքը պատկանում է մեր հուշարձանները ջերմորեն սիրող վաղամեռիկ երկրաբան Հրաչ Քոչինյանին, որը ոչ մի կերպ չէր համակերպվում Զվարթնոցի վերականգնումը հետաձգելու մտքի հետ և ամեն անգամ հանդիմանելով կրկնում էր «ինչու՞ ո՛չ Զվարթնոցը, այն մեր բոլոր հուշարձաններից ամենահայկականն է և ամենամարդկայինը, պետք է համառորեն պայքարել Զվարթնոցի վերականգնման համար»: Այս հարցը այժմ շատերին է հուզում և հաճախ կրկնում են «ինչու՞ ո՛չ Զվարթնոցը»:

Եվ իրոք, ժամանակակից շինարվեստը մեզ լիակատար հնարավորություն է ընձեռում մշակել այնպիսի կոնստրուկցիա, որ հնարավոր լինի նոր հիմքի վրա բարձրացնել Զվարթնոց հուշարձանը, անվթար թողնելով պահպանված ավերակը:

Ճարտարապետական հուշարձանների պահպանման կամավոր ընկերությունը ամենամյա զգալի գումարներ է հատկացնում վնասված հուշարձանների վերականգնման գործին: Այժմ ոչինչ չի խանգարում, որ մոտ ժամանակներում նախապատրաստվի և իրականացվի Զվարթնոցի վերականգնումը: Այն հետագայում կօգտագործվի որպես ճարտարապետության և արվեստի թանգարան և կամ, որպես լավ համերգասրահ: